

ՀնԶՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԼԵԶՎԱԿԱՆ ՄԻԱՎՈՐ՝

Ա. Ս. ԱՐԲԱՀԱՄԾԱՆ

Լեզվական նշանների ենթակարգության մեջ հնչյունները կազմում են առաջին, հիմնային մակարդակը և դրանով յուրահաստուկ դիրք են գրավում լեզվում: Այս մակարդակի միավորին տրվող տարբեր անվանումները կապվում են նրա անմիասնական ըմբռնման հետ: Առկա է մի տերմինաբանական խառնաշփոթ, որում անվանափոխությունների և իմաստափոխությունների շղթայակցումն անորոշ ու անհաստատ է դարձնում միավորի ըմբռնումը: Երկու հիմնական տերմինների («հնչյուն» և «հնչույթ») առկայությունը ստիպում է նախ ճշտել դրանցով անվանվող իրողություններն ու նրանց հարաբերությունը:

Հնչույթի և հնչյունի կապի ժխտումը մի դեպքում ընդհանրապես կապի ժխտում է և հնչույթի որակում որպես հնարանք (Քուռդել)¹, մյուս դեպքում՝ անհրաժեշտ կապի ժխտում և հնչույթի՝ որպես սոսկ հարաբերություններով որոշվող միավորի, առաջնայնության ու հնչյունական նյութից անկախության պնդում (Ծլմսյև, Ուլդալ, Քոգեբյու): Բայց բացատրողական արժեք չունեցող հնարանքն ավելորդ շոայություն է գիտության համար, իսկ բացարձակ վերացականությունը հարում է անիրականությանը (սա էլ հնարանք դարձած կամ դարձված իրականությունն է):

Հնչյունի և հնչույթի կապի ընդունումը կարող է կատարվել կամ որպես նրանց նույնացում, կամ որպես որոշակի հարաբերությունների բացահայտում:

Հնչույթն ու հնչյունը նույնացվում են, երբ հնչույթ է համարվում խոսքում հանդես եկող հնչյունը կամ հնչյունների դասը (Անդրեյդ, Զինդեր, Ֆիրթ, Հոքեթ, Դ. Ջոունզ, Ջահուկյան և ուրիշներ) և Հնչույթի այս գնահատումների տարբերությունը զուտ քանակային է (մեկ հնչյուն կամ շատ հնչյուններ), և եթե Ջոունզն իր «հնչյունների ընտանիք» համարած հնչույթը որակում է որպես «վերացություն»², ապա դա պետք է համարել «վերացություն» բառի ոչ տերմինային գործածություն կամ «վերացություն» տերմինի ոչ ճշգրիտ գործածություն՝ որպես ընդհանրացում զուտ քանակային աճի իմաստով:

Հնչույթի այսպիսի ըմբռնումների դեպքում հնչյունի կրկնակի համար նոր տերմինի ներմուծումը չի արդարացվում: Ընդ որում ավելորդ է դառնում ոչ միայն տերմինը, այլև նրա հետ կապված հասկացությունը, որն առանձնացվում է, բայց այդպես էլ չի առանձնանում, չի տարորոշվում, մնում է «հնչյուն» հասկացությանը միախառնված:

Հնչյունի և հնչույթի միջև ուրիշ լեզվական միավորներով շմիջնորդավոր-

¹ Ու. Քուռդելը հնչույթի և հնչյունի փոխհարաբերության խնդիրը փոստորեն վերածում է հնչույթի իրական կամ անիրական լինելու խնդրին՝ այդպիսով, ըստ էության, վերսկսելով հանրույթների մասին հին փիլիսոփայական բանավեճը և կանգնելով նովինալիզմի գերբերում:

² Հմմտ. Գ. Յ. Воронкова. Проблемы фонологии. Л., 1981, էջ 87:

ված կապի ընդունումը, որպես կանոն, կապվում է դրանք համապատասխանաբար խոսքային և լեզվական միավորների համարելու հետ (Շչերբա, Սեպիր, Ղափանցյան, Աղայան, Լոսև, Ավետյան, Ս. Աբրահամյան, Առաքելյան, Մարգարյան և ուրիշներ): Հնչույթի և հնչյունի փոխհարաբերությունը լեզվի և խոսքի տարբերակման հետ կապող տեսակետները, իրենց տարբերություններով և ճշմարտացիության տարբեր աստիճաններով հանդերձ, ունեն մի ընդհանրություն. նրանցում լեզվական միավորը և նրա խոսքային համարժեքը (որպես ընդհանուր և մասնավոր կամ վերացական և կոնկրետ կամ հոգեկան և ֆիզիկական կամ հասարակական և անհատական կամ գործառական և նյութական) տարբեր տերմիններով են նշանակվում: Մյուս լեզվական միավորները լեզվում և խոսքում վերցվելիս տարբեր անվանումներ չեն ստանում⁵, և անհասկանալի է, թե ինչու է հնչյունի համար այդ տերմինափոխությունն անհրաժեշտ դառնում, եթե ընդունվում է, որ երկու իրողությունները «նույնական են, որչափով որ նույնական են ամեն մի ընդհանուր և նրա առանձնակի, եզակի դրսևորումը»⁶:

Հնչույթի էությունը երբեմն որոշվում է մի ուրիշ մակարդակի միավորի հետ նրա կապերով: Որոշ դեպքերում որպես այդպիսին վերցվում են ավելի բարձր մակարդակի միավորները՝ ձևությունները, բառերը (Կրուչևսկի, Բոգունով և Կուրտենև, Բյուլեր, Շչերբա, Բուդազով, Ռեֆորմատսկի, Առաքելյան, Ս. Աբրահամյան, Մարգարյան և ուրիշներ): Հնչույթը փաստորեն սահմանվում է իր գործառության հիման վրա, ինչը դեռևս նոր տերմինի անհրաժեշտության հիմնավորում չէ, քանի որ խոսքը հենց հնչյունի գործառության մասին է:

Երբեմն էլ հնչույթը կապվում է, ընդհակառակը, ավելի ցածր մակարդակի միավոր համարվող իրողության հետ: Որպես այդպիսին վերցվում են տարբերակիչ հատկանիշները (Բլումֆիլդ, Յակոբսոն, Չոմսկի, Բենվենիստ, Աղայան, Առաքելյան և ուրիշներ) կամ բոլոր հատկանիշները⁵ (Տրնկա, Կուլենցով, Ռեֆորմատսկի, Մարգարյան): Բայց հատկանիշների գումարումից միայն հատկանիշների գումար⁶ կարող է ստացվել: Պարզ չէ, թե ինչպես կարող է հնչյունի հատկանիշների փունջը կամ համախումբը դառնալ լեզվական միավոր, որն արդեն հատկանիշից տարբեր բան է: Իրողության և նրա հատկանիշի հարաբերությունն ամբողջի և մասի հարաբերություն չէ: Իրերը չեն կազմվում հատկանիշներից, այլ ունենում են հատկանիշներ, ներկայանում են հատկանիշներով: Հատկությունները կարող են իրային կերպի մեջ, կամ իրերը՝ հատկությունային կերպի մեջ դիտարկվել (միջնադարյան տրամաբանների սիրած թեման), բայց դա նրանց առաջնային ֆոնաբանական նկարագիրը չէ: Հնչյունը, թեև կազմված «հնչույթ» անունով, չի կարող բացառություն կազմել

⁵ Ձևություն և ենթաձևությունները, բառություն և բառաձևերը հավասարապես լեզվական միավորներ են՝ կապակցությունից դուրս և կապակցության մեջ. նախադասության և ասույթի տարբերակումը, եթե կատարվում է, սկզբնապես հիմնվում է կառուցվածքային և հաղորդակցականի, իսկ այդ երկուսի և պրոպագանդայի տարբերակումը՝ լեզվականի և գատնականի հաղորդման վրա:

⁶ Է. Բ. Աղայան, լեզվաբանության հիմունքներ, Ե., 1987, էջ 247:

⁵ Հնչույթի՝ որպես տարբերակիչ հատկանիշների փնջի, ըմբռնման քննադատությունը տե՛ս, օր., Գ. Վ. Воронкова, М. И. Стеблин-Каменский. Фонема—пучок РП?— М. И. Стеблин-Каменский. Спорное в языкознании. Л., 1974, էջ 120—121, Գ. Б. Джаукян. Общее и армянское языкознание. Е., 1978, էջ 25, Ռ. Մ. Փոխմախյան, Ժամանակակից հայերենի շեշտաբանությունը, Ե., 1983, էջ 7:

⁶ Ս. Շահումյանը հնչույթները հետևողականորեն հենց այդպես էլ բնորոշում է՝ որպես հնչյունների բարդ հատկանիշներ (քանի որ դրանք հնչյունների հատկանիշների վերացարկումների միացություն են). տե՛ս Ս. К. Шаумян. Философские вопросы теоретической лингвистики. М., 1971, էջ 131—132:

ընդհանուր սկզբունքից: Հնչյունի իրային լինելը նրա հիմնաբնույթն է. լեզվում խոսքից կատարվող վերացարկումը ապաիրայնացում-հատկանշայնացում չէ, այլ միայն ապանյութականացում:

Իր ներքին կառուցվածքով և այլ տեսությունների հետ արտաքին կապերով մյուսներից առանձնանում է Ն. Տրուբեցկոյի հնչույթաբանական տեսությունը: Տրուբեցկոյը նշում է խոսքից լեզվին անցման հետ կապված ոչ թե երկու միավոր՝ հնչյուն և հնչույթ, այլ երեքը՝ խոսքի հնչյուն, լեզվի հնչյուն, հնչույթ⁷: Լեզվի հնչյունը խոսքի հնչյունի հարաբերակիցն է լեզվում, իսկ հնչույթը՝ նրա հնչույթաբանորեն էական՝ իմաստներ տարբերակող, հատկանիշների ամբողջությունը:

Նոր Տրուբեցկոյի տված եռանդամ հակադրությունը զուգադրվում է ուրիշ տեսություններում առկա երկանդամ հակադրության հետ, ստացվում է, որ Տրուբեցկոյի «հնչույթ» և «լեզվի հնչյուն» հասկացությունների դիմաց դրանցում կա միայն մեկ հասկացություն՝ «հնչույթ», որը նույնացվում է մերթ լեզվի հնչյունին, մերթ հատկանիշների փնջին՝ բուն հնչույթին ըստ Տրուբեցկոյի, մերթ էլ երկուսին միաժամանակ: Վերջին դեպքում անհամատեղելիները համատեղվում են տարբերությունների և դրանցից բխող հետևանքների անտեսմամբ, դրանց վրա «աչք փակելով», ինչը մի խնդիրը լուծելու փոխարեն հարուցում է նոր խնդիր. այդ մոտեցման տրամաբանական վախճանը պիտի լինի լեզվականը խոսքայինի հատկանիշ համարելը: Է. Աթայանի տեսության մեջ հնչյունը, ընդհակառակը, է՛լ ավելի հանգամանորեն ու բազմակողմանիորեն է ներկայացված. տարբերակվում են լեզվական հնչյուն, խոսքային հնչյուն, լեզվախոսքային (անցման ոլորտի) հնչյուն, իսկ հնչույթները բնորոշվում են իբրև ձևական կարգեր՝ հնչյունների դասաբաշխական տեսակներ⁸:

XX դարի լեզվաբանության մեջ «դեգերող հնչույթի ուրվականը» ծնվում է տերմինի անմիանշանակությունից: Շփոթությունները, թերմբռնումն ու վեճերը «հնչույթ» տերմինի բազմիմաստության-համանունության հետևանքն են. անվանումների նույնությունը հանգեցնում է ըմբռնումների նույնացման, իսկ դա նման է երկու ոտքը մի մաշիկի մեջ խցկելու փորձերի, որոնք ի վերջո պիտի ավարտվեն կա՛մ զսպանակային ետհարվածով, կա՛մ քայլելու անկարողությամբ: Մեծ ցանկություն ունենալու դեպքում, իհարկե, կարելի է հնչյունի լեզվական առումը կամ տարբերակիչ հատկանիշների փունջը (սակայն անպայման կամ միայն մեկը, կամ միայն մյուսը) «հնչույթ» կոչել: Մանավանդ եթե հնչույթը դիտվի սոսկ որպես հնչյունի հատկանիշների համախումբ, բայց ոչ որպես լեզվական միավորների ենթակարգության մի անդամ, ապա թերևս արդարացված կլինի հնչյունից (խոսքի և լեզվի հնչյունից) տարբերակվող այդ իրողությանն առանձին տերմին հատկացնելը:

Հնչյունը լեզվականորեն տարբական և լեզվաբանորեն անտարրալուծելի միավոր է: Հետագա վերլուծման կարող է ենթարկվել հատկանիշների խումբ համարվող հնչույթը, բայց այդպիսի վերլուծության արդյունք դարձող հատկանիշներն արդեն լեզվական միավորներ չեն լինի: Հնչյունի մասնատումը հնարավոր է միայն այն դեպքում, եթե այն դիտվի որպես ֆիզիկական իրողություն՝ անկախ նրա լեզվական գործառումից. այդպիսին է հնչյունի ձայ-

⁷ Տե՛ս Н. С. Трубецкой. Основы фонологии. М., 1960, էջ 45 (ցավոք, Տրուբեցկոյի ինքը հետևողականորեն չի կիրառում այս բաժանումը ամբողջ աշխատության մեջ): Փոքր-ինչ այլ տերմիններով (հնչույթ-հնչյուն-հնչույթ), բայց ըստ էության այս նույն եռանդամն է ներկայացնում է Աղայանը. տե՛ս է. Բ. Աղայան, նշվ. աշխ., էջ 235—240:

⁸ Տե՛ս է. Բ. Աթայան, Լեզվական աշխարհի ներքին կերպավորումը և արտաքին վերաբերությունը, Ե., 1981, էջ 103—104, նաև էջ 55, 96—97:

նաբանական վերլուծությունը: Այդ դեպքում հատույթավորվում է լեզվական ձևից կտրված ձայնային հիմնանյութը (սուբստանցը): Սակայն հիմնանյութն ու ձևը դիալեկտիկական միասնություն են կազմում, և լեզվի արտահայտության հիմնանյութն ինքնին, առանց լեզվական ձևի վերցվելիս այլևս լեզվական իրողություն չէ:

Հնչյունական արտահայտության գործառությունը բովանդակության արտահայտումն է: Սովորաբար «հնչյութի» մասին ասվում է, որ այն ունի իմաստատարբերակիչ գործառություն: Ընդ որում ենթադրվում է, որ հնչյութներով տարբերակվում են ձևույթների կամ բառերի, այսինքն՝ ոչ հնչյունային մակարդակի միավորների իմաստները: Մի մակարդակի միավորների էությունը հանգեցվում է մի ուրիշ մակարդակի պատկանող լեզվական տարրերի տարբերակմանը: Ըստ էության՝ նույն մոտեցման արտաբուստ այլ դրսևորումն է հնչյութները ձևույթների կամ բառերի ոչ թե իմաստների, այլ նրանց արտահայտությունների տարբերակիչներ համարելը: Իրոք, հնչյունական արտահայտությունները ոչ թե տարբերակում, այլ արտահայտում են բովանդակությունները, իսկ բաղադրյալ արտահայտությունների տարբերվող բաղադրիչները կարող են այդ արտահայտությունների տարբերության ցուցիչներ լինել: Սակայն դա հնչյուն-հնչյութի առաջնային գործառությունը չէ: Իրականությանն ազելի մոտ լինելով հանդերձ՝ այս տեսակետը նույնպես մակարդակների հարաբերությունը հանգեցնում է տարբերակման հարաբերության, մընում է տարբերակման սեևոուն գաղափարի մոգական ազդեցության տակ: Այս դեպքում մակարդակների միջև հարաբերությունները որոշվում են նույն դիրքորոշման համաձայն, որով հնչյութի տարբերակիչ հատկանիշներն առանձնացվում են որպես լեզվի ինքնուրույն կառուցվածքային մակարդակ:

Ավելի բարձր մակարդակի միավորի բովանդակության հետ հնչյունի հարաբերությունը չի հանգում սոսկ իմաստների տարբերակմանը: Ձևույթի բովանդակության մեջ հնչյունն ունի ոչ թե իմաստատարբերակիչ, այլ իմաստակազմիչ գործառություն: Հակառակ դեպքում, եթե ձևույթների բովանդակությունների տարբերությունները բխեցվում են նրանց կազմի մեջ մտնող առանձին հնչյունների տարբերություններից, ստացվում է, որ այդ բովանդակություններն արտահայտողները հենց այդ հնչյուններն են, իսկ մյուսները ոչ մի կապ չունեն բովանդակության հետ և միայն հենապատկերի դեր են կատարում տարբերությունների համար: Իսկ եթե ձևույթի բովանդակությունը կազմվում է հնչյունի հետ, ապա կասկածելի է դառնում ձևույթային մակարդակի ինքնուրույնությունը: Մինչդեռ իրականում հակադրվում են տարբեր բովանդակություններ ունեցող ձևույթների ամբողջ կառուցվածքները: Ամեն մի առանձին հնչյուն միայն իր մասն է ներմուծում ամբողջի մեջ, դառնում նրա բաղադրիչը, այն կազմող մասը ոչ միայն արտահայտության, այլև բովանդակության մեջ: Միայն որպես այդպիսի բաղադրիչ՝ հնչյունը կարող է տարբերակել արտահայտությունները կամ բովանդակությունները: «Ըստ էության, հնչյութի իմաստատարբերակիչ նշանակությունը նրա իմաստաձևավորիչ հիմնական դերից բխող հետևանք է»⁹:

Ձևույթի բովանդակության արտահայտման մեջ նրա ամբողջ հնչյունական կառուցվածքի կարևորության մասին է վկայում այն, որ իմաստատարբերակիչ հակադրության մեջ գտնվող հնչյուններ են համարվում միայն և միայն նույն դիրքում գտնվող հնչյունները: Ձևույթների միջև կան ոչ թե պարզապես հնչյունական տարբերություններ, այլ հնչյունական կառուցվածքի տարբերություններ: Այդ է պատճառը, որ տարբեր ձևույթները կարող են

⁹ Ս. Գ. Աբրահամյան, Ժամանակակից գրական հայերեն, Ե., 1981, էջ 8:

կազմված լինել նույն հնչյունների տարբեր դասավորություններով: Ի վերջո, ճիշտ կլինի ասել, որ ձևույթները տարբերվում են ոչ թե հնչյուններով, այլ հնչյունների տարբերություններով (տարբերությունը արդեն հատկանիշ է և կարող է հանդես գալ իբրև տարբերակիչ հատկանիշ):

Այսպիսով՝ հնչյունը մասնակցում է ձևույթի ինչպես արտահայտության, այնպես էլ բովանդակության կազմավորմանը: Դա նրա գործառությունն է, որն իր հիմքում ունի որոշակի բովանդակություն, բխում է նրանից, բայց չի նույնանում նրա հետ: Այդպիսի բովանդակություն հնչյունը չի կարող չունենալ: միավորը որևէ դեր կարող է կատարել միայն իմաստավորված լինելու դեպքում: Բացի դրանից՝ հնչյունը չի կարող անբովանդակ լինել, որովհետև բովանդակություն է բաղադրում: Եվ վերջապես, հնչյունը բովանդակությունից զուրկ համարելը նշանակում է ընդունել բովանդակություն չունեցող արտահայտության գոյությունը, քանի որ հնչյունի արտահայտական կողմը ոչ ոք չի ժխտում: Բայց բովանդակությունն ու արտահայտությունը հարաբերակից իրողություններ են, և մեկն առանց մյուսի չի կարող գոյություն ունենալ: Արտահայտության և բովանդակության առանձնացումը վերացարկում է, որը կատարվում է գիտության մեջ՝ ուսումնասիրության նպատակով: Իսկ հնչյունն այդպիսի վերացություն չէ, ամեն մի խոսողի գիտակցության մեջ արտացոլված են նրա խոսած լեզվի հնչյունները (ի տարբերություն, ասենք, գիտական վերլուծությամբ որոշվող բովանդակային տարրերի՝ իմաստույթների): Մի ուշագրավ փաստարկ էլ այն է, որ լեզվում հնչյունական բովանդակության գոյությունը «ապացուցվում է թեկուզ և երաժշտության գոյությամբ, որի բովանդակությունն ամբողջապես «հնչյունական ձևի նշանակալիցությունն» է, այսինքն՝ հնչյունների խորհրդանշական նշանակությունը ... Գարզ չէ, թե ինչու խոսքի հնչյունը զուրկ պիտի լինի այն հատկանիշներից, որոնցով օժտված է հնչյունն ընդհանրապես»¹⁰:

Հնչյունն անբովանդակ համարելու դեպքում խճճված ու անհասկանալի են մնում նրա և ձևույթի հարաբերությունները: Հնչյունի արտահայտությունը կապվում է ձևույթի բովանդակության հետ: Մակարդակների միջև սահմանվում է նշանակման հարաբերություն: Անհասկանալի է, թե ինչպես են կապակցվում լեզվի երկու մակարդակներից մեկի արտահայտությունը և մյուսի բովանդակությունը: Ձևույթը բովանդակություն ունի, բայց այդ բովանդակությունը չգիտես ինչու կապվում է (մանավանդ հնչյունների իմաստատար բերակիչ դիրքի ընդգծման հետևանքով) ոչ այնքան նրա, որքան հնչյունի արտահայտության հետ: Մի մակարդակի միավորը հավասարեցվում է մյուս մակարդակի միավորի արտահայտությանը: Ձևույթի և հնչյունի միջև արտահայտության առումով դիտվում է միայն քանակային տարբերություն, մինչդեռ իրականում ձևույթը ո՛չ հնչյուն է, ո՛չ էլ հնչյունակապակցություն, այլ միայն իր արտահայտության մեջ ունի հնչյունի կամ հնչյունակապակցության արտահայտությունը:

Բովանդակության առումով հնչյունի և ձևույթի միջև սահմանվող փոխհարաբերությունն ավելի տարակուսելի է. հնչյունից ձևույթին անցման ժամանակ կատարվում է մի անըմբռնելի թռիչք: Մինչ այդ բովանդակություն չունեցող արտահայտությունը հանկարծ առգորվում է բովանդակությամբ և զարմանալիորեն շնչահեղձ չի լինում այդպիսի կտրուկ փոփոխությունից: Եվ այդպես էլ հանելուկ է մնում մի կողմից՝ թե արտահայտությունը, որը հետո բովանդակություն պիտի ստանար, ինչպես գոյություն ունեի մինչ այդ, և մյուս կողմից՝ թե ինչպես է արտահայտությունը, անբովանդակ գոյությանը

¹⁰ А. П. Журавлев. Фонетическое значение. Л., 1974, էջ 14—15.

վարժված լինելով, կապվում բովանդակության հետ: Այս հանելուկի երկու ենթահարցերը միանգամից հանգուցալուծվում են (միայն այնպես, ինչպես գորդյան հանգուցն է քանդվում), երբ հնչյունը, բովանդակությունից կտրրվելով և տարբերակիչ հատկանիշների բզկտվելով, տեռություն մեջ արդեն կենսազերծ է արվում և ապա շարտվում բովանդակության վրա որպես նրա ոչ թե կենդանի արտահայտիչ, այլ մեռյալ ծածկույթ: Բայց իրական գիտություն ինդիերը ճանաչումն է և ոչ հարցի վերացումը:

Հնչյունները անտարակույս զուրկ են հասկացական բովանդակությունից: Նրանք ունեն անորոշ ընդհանուր բովանդակություն, որը մասնավորվում և որոշակիանում է, երբ հնչյունը կամ հնչյունների կապակցությունը, մակարդակային թոնիչթաձև անցում կատարելով, ստանում է ձևույթային արժեք:

Հնչյունի բովանդակությունը միարժեքորեն տրված մեծություն է: Հընչյունական միավորի արտահայտությունը՝ հնչումը, առաջ է բերում հոգեկան արձագանք, ինչ-որ տպավորություն: Այդ տպավորությունն էլ կազմում է հնչյունական նշանակության հիմքը: Հնչյունի նշանակությունը հնչյունային ապրում է, այն եղանակային բնույթ ունի, եղանակավորող հեռապատկեր է ստեղծում այն հասկացական բովանդակության համար, որի անվանման մեջ գործածվում է տվյալ հնչյունը¹¹: Ինչպես ցույց են տալիս բազմաթիվ հոգեվարանական գիտափորձերը, հնչյուններն առաջացնում են պատկերացումների հետ բավականաչափ կայուն զուգորդումներ: Հնչյուններն իմաստների հետ հարաբերակցության մեջ դնելը, ուրեմն, աշխարհի կամ լեզվի յուրօրինակ բանաստեղծական ընկալման բացառիկ շնորհ է, այլ այդ շնորհի շնորհիվ առավել բացահայտ դարձող՝ լեզվի հնչյունական համակարգի համապատասխան ունակության դրսևերումը: Հնչյունի բովանդակային հարուստությունը որոշվում է նրա առաջացրած զուգորդումներով: Քանի որ դրանք ոչ թե արտալեզվական իրողությունների անմիջական արտացոլման արդյունք են, այլ լեզվական արտահայտությամբ պայմանավորված զուգորդումներ, ուստի շեն կարող խիստ որոշակի և միանշանակ լինել:

Հնչյունը դեռևս զաղափարի անունը չէ: Հնչյունի բովանդակությունը ոչ թե արտալեզվական իրականության որոշակի հատվածն արտացոլող որոշակի իմաստ է, այլ իմաստային հակում¹²: Այն ուրվագծում է ընդհանուր տրամադրությունը, որոշում է տոնայնությունը, որի մեջ ներառված է հնարավոր իմաստային վերաբերությունների մի ամբողջ երանգաշար (այնպես, ինչպես այս կամ այն տոնայնությունը կազմող հնչյունաշարը «պարունակում է» նրբանով ստեղծվելու ընդունակ ամենաբազմազան ստեղծագործություններ, ասենք՝ մի սի մինոր պատարագից մինչև մի սի մինոր վայս):

Առաջին հայացքից կարող է թվալ, թե հնչյունի բովանդակալից լինելն ամենաակնառու կերպով հանդես է գալիս բնածայնություններում: Սակայն հնչյունական բովանդակությունը բնածայնությունից միանգամայն տարբեր հիմքեր ունի: Բնածայնությունը ոչ լեզվական հնչման առավել կամ պակաս

¹¹ Որոշ հնչյունակապակցություններում նշանակցային (կոննոտատիվ) նշանակություն են դիտում Ն. Մարթելը և է. Հեմփը. հմտ. D. L. Bolinger. Forms of English: Accent, Morpheme, Order. Cambr. (Mass.), 1965, էջ 218. տե՛ս նաև E. Д. Поливанов. По поводу «звуковых жестов» японского языка.— Избранные работы: Статьи по общему языкознанию. М., 1968, էջ 304—305: Հնչյունային նշանակությունը որպես նշանակցային է քերթողում Ա. Փարավյոսը, սակայն նշանակցայինը նա ըմբռնում և մեկնաբանում է իբրև հատկանշային. տե՛ս А. П. Журавлев, նշվ. աշխ., էջ 31:

¹² Հմտ. Ա. Փարավյոսի «միտման դաշտ» (ն. տ., էջ 15) և է. Աթայանի «հասկացական վերաբերություններ անհնալու անորոշ գործառական հնարավորություն» (նշվ. աշխ., էջ 103) համանման ձևակերպումները:

հաջողված լեզվական նմանակում է: Դա արտալեզվական ձայնային արտահայտության հետ հնարավորին շփ մեծ նմանության ձգտող լեզվական արտահայտությունն է, որը որպես բառ անվանում է համապատասխան իրողությունը: Բայց դա նրա բառային բովանդակությունն է և ոչ հնչյունականը: Իրողությանը հնչյունային արտահայտում տալու համար պետք է նրա ոչ թե արտաքին, այլ ներքին ընդօրինակում: «Ձէ՞ որ ամեն մի իր ունի իր հնչումը, ուրվագիծը, իսկ շատերը՝ նաև գույնը... Անվանման արվեստը, ինչպես երեվում է, կապված է ոչ այնպիսի ընդօրինակման հետ, երբ որևէ մեկն ընդօրինակում է իրերի այդ հատկությունները... ամեն մի իր նաև իր էությունն ունի... եթե մեկը կարողանար տառերի և վանկերի միջոցով ընդօրինակել ամեն մի իրում հենց այդ՝ էությունը, մի՞թե նա չէր կարողանա արտահայտել ամեն մի իր, որ գոյություն ունի»¹³: Հնչյունները լեզվում նյութական մարմին առած էություններ են և, այդպիսին լինելով, անվանաստեղծման մեջ անուն ստացողի հենց էության հետ էլ կապվում են (անուն տվողի միջնորդավորումով, իհարկե): Հնչախորհրդանշումը էությունային խորհրդանշում է: Հնչյունի և իրի կապը էությունների՝ երևույթներով շմիջնորդավորված (ան-երևույթ) կապ է՝ ընկղմված լեզվասերման և լեզվազգացողության անհասանելի խորքերը: Երևույթի մեջ տրված և երևույթի հետ վերցվող էության անվանումն իրագործվում է անվանողական արժեք ստանալու ունակ լեզվական միավորներում՝ ձևույթում, բառում: Իսկ հնչյունը ոչ թե արտալեզվական իրողությունն անվանող, այլ իր էությամբ նրա էությունն արտահայտելու կարողությամբ օժտված միավոր է, որն այդպիսով գաղափարի ճնշունակաճ ներկայացումն է իրագործում¹⁴: Բայց հնչյունի բուն բովանդակությունը չի հանգում նրա հնարավոր վերաբերություններին: Դրանք նրա բովանդակությունը չեն կազմում, այլ այդ բովանդակության արդյունքն են: Որևէ իրողություն արտահայտելու կարողություն հնչյունը ձեռք է բերում իր իսկ բովանդակության շնորհիվ: Արտալեզվական էության հնչյունական արտահայտումը՝ անվան հնչյունական պատճառաբանվածությունը, հնարավոր է դառնում հնչյունի բովանդակության և արտահայտվելու ենթակա իրողության միջև որևէ ընդհանրության, ավելի ճշգրիտ՝ հնչյունի և արտալեզվական իրողության գործած տպավորությունների ընդհանրության հետևանքով¹⁵:

Հնչյունն իր բովանդակության յուրահատկությամբ առանձնանում է մյուս բոլոր լեզվական միավորներից: Այդ յուրահատկությունը հանդես է գալիս արտալեզվական վերաբերության, վերաբերական նշանակության (նախորդի լեզվականորեն ամրագրված ընդհանրացման), ներլեզվական (լեզվական կառուցվածքով որոշելի) նշանակության և արտահայտության յուրօրինակ փոխհարաբերություններում ու նրանց սերման սովորականին հակառակ ընթացքում: Առաջնայինը, որոշիչը հնչյունի համար արտահայտությունն է: Այն իրենով պայմանավորում է հնչյունի բովանդակությունը: Արտահայտության հետ կապված լինելով՝ հնչյունի բովանդակությունը հանդես է գալիս որպես անխառն ներլեզվական նշանակություն: Սակայն այստեղ ներլեզվական նշա-

¹³ Платон. Кратил.— Сочинения, т. I, М., 1968, էջ 468—469:

¹⁴ Երբ Դեմոկրիտոսն աստվածների անունները համարում է «երանց հնչող պատկերումներ» (Античные теории языка и стиля. М., Л., 1936, էջ 33), նա խոսում է միայն մի մասնավոր դեպքի մասին, բայց ի սկզբանե այդպիսին է յուրաքանչյուր անվանում:

¹⁵ Հմմտ. խորհրդանշանի ստեղծման և գոյության ընդհանուր պայմանը. «... երկու տարանջատ իմաստային ոլորտների բաժանվածությունը ... ոչ մի դեպքում չի կարող վերջնական համարվել, քանի որ այդ բաժանումից բացի՝ այստեղ անպայման ենթադրվում է նաև համընկնում» (А. Ф. Лосев. Проблема символа и реалистическое искусство. М., 1976, էջ 46):

նակութիւնը չի որոշում արտահայտութիւնը, այլ ինքն է որոշվում նրանով: Հնչյունի արտահայտութեան և բովանդակութեան միջև, ուրեմն, լեզվի մյուս մակարդակներում եղածին հակադարձ հարաբերութիւնն գոյութիւն ունի. նախապես տրվածը արտահայտութիւնն է, իսկ բովանդակութիւնը բխում է նրանից: Ակնհայտ է, որ սա բովանդակութեան և արտահայտութեան այնպիսի հարաբերակցում է, որպիսին հաղորդակցական գործընթացում բնորոշ է ընկալողին: Ամբողջութեամբ ենթագիտակցութեան ոլորտում ամփոփված հնչյունային բովանդակութիւնը չի կարող ենթարկվել հաղորդողի կամային ներգործութեան: Անտիկ լեզվափոխութեան մեջ քննարկվող «ըստ դրվածքի» սկզբունքը կիրառելի չէ հնչյունի նկատմամբ: Հնչյունը կարող է նշանակել միայն այն (և մյուս կողմից՝ այն ամենը), ինչ նշանակում է ընկալողի համար: Հնչյունի բովանդակութիւնը տպավորութեան ծնունդ է, անկեղծ լեզվական «իմպրեսիոնիզմի» լավագույն դրսևորում (որին հավասարակշռող հակադիր հնչյունի արտահայտութեան՝ լեզվական «էքսպրեսիոնիզմի» հիմնաքարը լինելն է): Անգամ հնչյուններն արտաբերողն իր արտաբերած հնչյունները գնահատում է՝ թեկուզ մտովի դրանք օբյեկտիվացվածութեան կարգավիճակում դիտարկելով, ընկալողի տեսանկյունից, որպեսզի կարողանա, ընկալողին «համահունչ» լինելով, ընկալելի դարձնել բովանդակութիւնը: Պատահական չէ, որ հնչյունի բովանդակութեան բացահայտման ամեն մի փորձ արվում է հնչյունի ընկալումը վերլուծելով և արժեքավորելով:

Հնչյունը մյուս լեզվական միավորներից տարբերվում է արտահայտութեան և բովանդակութեան կապի ոչ միայն ուղղվածությամբ, այլև բնութիւնով: Լեզվական արտահայտութիւնը ներլեզվական, նշանակութեան հետ ընդհանրապես կապվում է կառուցակերպի (կառուցվածքային ձևի) միջնորդավորումով: Արտահայտութիւնն ու ներլեզվական նշանակութիւնն ուրիշ դիպքերում կապակցվում են, քանի որ նույն կառուցակերպով են ձևավորվում: Հնչյունի ներլեզվական նշանակութիւնն այն առանձնահատկութիւնն ունի, որ, ի տարբերութիւն մյուս մակարդակների միավորների ներլեզվական նշանակութիւնների, կառուցվածքայնորեն բաղադրվող նշանակութիւնն է: Մյուս լեզվական նշաններում ներլեզվական նշանակութիւնը բաղկանում է ավելի ցածր մակարդակների միավորների նշանակութիւններից՝ ըստ համապատասխան կառուցակերպի: Իսկ հնչյունի բովանդակութիւնը լեզվական կառուցվածք չունի՝ ճիշտ այնպես, ինչպես որ լեզվական կառուցվածք չունի հնչյունի արտահայտութիւնը: Հնչյունի բովանդակութիւնը կարող է վերլուծվել դարձյալ ուրիշ գիտութեան, այս անգամ՝ հոգեբանութեան մեջ, բայց այդ կերպ բացահայտված բովանդակային կառուցվածքի տարրերը, ուրեմն և կառուցվածքն ինքը լեզվական չեն լինի: Լեզվական առումով հնչյունի (ներլեզվական) նշանակութիւնն անտարրալուծելի է և առաջանում է ոչ թե կառուցակերպի, այլ նույնպես անտարրալուծելի արտահայտութեան հիման վրա: Սա չի նշանակում, թե հնչյունի բովանդակութիւնն ու արտահայտութիւնը նույնանում են, արտահայտութիւնը դառնում է նրա բովանդակութիւն¹⁶: Նույնացման պատճառով ստեղծում են անմիջական և անանջատ միասնութիւնը (Ռ. Բարտի տերմինով՝ «զուգաբանութիւնը»)՝¹⁷ և սերման անսովոր ուղղվածութիւնը:

¹⁶ Այդպիսի մեկնաբանումների «հնչյութի» համար տե՛ս Յ. Գ. Аветян. Природа лингвистического знака. Е., 1968, էջ 212, 214, А. Ф. Лосев. В поисках построения общего языкознания как диалектической системы. — Теория и методология языкознания. М., 1989, էջ 88:

¹⁷ Բ. Барт. Основы семиологии. — Структурализм: «За» и «против». М., 1975, էջ 133: Ռ. Բարտն այս հատկութիւնը վերագրում է ամբողջ լեզվին, բայց դա հատկապես հնչյունի յուրահատկութիւնն է, որովհետեւ այստեղ դա անխառն անմիջականութիւն է նույնիսկ

Հնչյունային բովանդակության լեզվական այլ զուգահեռների որոնման գեպըում մեծ կարող է լինել նաև ձայնարկությունների հետ նմանություն տեսնելու գայթակղությունը, մանավանդ որ հնչյունային բովանդակությունը առավել, քան լեզվական բովանդակության մյուս բոլոր գոյաձևերը, հիմնը վում է մարդու ներաշխարհի վրա: Բայց ձայնարկությունը բառ է, և հույզը նրա բառային բովանդակությունն է: Չնայած իր զգացմունքային ծագմանը՝ ձայնարկությունն ունի առավել կամ պակաս հստակ սահմանագծված բովանդակություն՝ շատ ավելի որոշակի, քան հնչյունինը: Ձայնարկությունն ինքն է իր բովանդակությամբ հիմնվում հնչյունի վրա, և ոչ թե հակառակը: Ձայնարկությունները (ինչպես և բնաձայնությունները) ունեն հնչյունական կառուցվածք, այսինքն՝ նրանց և բովանդակությունը, և արտահայտությունը ձևավորվում են ինչ-որ, թեկուզ և դեռևս չբացատրվող կառուցակերպով. այդ կառուցակերպը վերադրվում է արդեն իսկ իրենց ձևն ունեցող հնչյունների ու հույզերի վրա և վերաձևավորում է դրանք:

Այնպես որ ո՛չ բնաձայնությունը, ո՛չ ձայնարկությունը իրենց բովանդակությամբ չեն կարող հավասարեցվել հնչյունին, այլ միայն՝ համեմատվել նրա հետ: Բայց այդ երկուսի միջև կան որոշակի տարբերություններ: Հընչյունի բովանդակությունը բնաձայնական համարելու հիմնական խանգարիչը իրային աշխարհին պատկանող բնօրինակի առկայությունն է: Իսկ հնչյունի բովանդակությունը ձայնարկային համարելու առաջնահերթ խոշորդոտը ձայնարկությունների արտալեզվական իմաստային հագեցումն է, որը բառայնացման անխուսափելի հետևանքն է:

Ձայնարկությունները լեզվական հնչյուններով են կանխորոշում իրենց իմաստները, բնաձայնությունները արտալեզվական հնչումների թիւղդրանքով են փորձում սահմանափակվել. այս պատճառով փոքր-ինչ տարակուսելի է այն մեծ ուշադրությունը, որին արժանանում են բնաձայնությունները հընչյունների բովանդակալիցության ուսումնասիրություններում: Ձայնարկությունն իր անմիջական լեզվական ակունքներով դրա համար շատ ավելի հիմքեր ունի:

Թեև հնչյունական նշանակությունն ըստ էության ներլեզվական է, այնուամենայնիվ, հնչյունը զուրկ չէ վերաբերական հնարավորությունից, հետևաբար և վերաբերական նշանակությունից: Հնչյունի վերաբերական նշանակության յուրահատկությունն այն է, որ այն ամբողջովին համընկնում է ներլեզվական նշանակության հետ: Ընդ որում եթե ընդհանրապես վերաբերական նշանակությունն արտալեզվական իրականության արտացոլումն է, սպա հընչյունի վերաբերական նշանակությունը նրա ներլեզվական նշանակության ածանցյալն է: Հնչյունը «նշան է, որը, սակայն, ձեռք է բերում իր արժեքը ոչ թե արտալեզվական իրադրության, այլ հենց ներլեզվական իրականության մեջ»¹⁸: Արտալեզվական իրականությունից կտրված, նրա հետ կապվելուց առաջ՝ սոսկ որպես լեզվական փաստ, հնչյունն արդեն ունի իր բովանդակությունը: Նրա բովանդակության ձևավորման համար արտալեզվական ազդակի կարիքը չի զգացվում, դրա համար բավարար պայման է հնչյունական արտահայտության գոյությունը: Այս իմաստով հնչյունն ինքնապարփակ է, ինքնարտահայտող: Այն առաջին հերթին ինքնանշանակող և միայն դրանից հետո, միայն դրա միջոցով ու դրա հետևանքով նաև այլանշանակող նշան է: Լեզուն իրենից դուրս եղածը նշանակող համակարգ է, և լեզվական նույնիսկ պարզագույն նշանը չի կարող իր գոյությունը սպառել սոսկ ինքնանշանակ-

լեզվի ներսում, մինչդեռ մյուս լեզվական միավորներում բովանդակության և արտահայտության կապը միջնորդավորվում է ավելի ցածր մակարդակների միավորներով, այսինքն՝ ներլեզվականորեն զուգահեռական չէ:

¹⁸ Յ. Դ. Аветян, նշվ. աշխ., էջ 212:

մամբ: Ինքնանշանակումը հնչյունի համար այն հիմքն է, որը նրան հագեցնում է այլանշանակման կարողութեամբ: Հնչյունի ներլեզվական նշանակութեան մեջ որպես իրականացման սպասող հնարավորություն կա նրա վերաբերական նշանակությունը, և հենց այդ հնարավորության իրականացումով էլ իմաստավորվում է ներլեզվական նշանակության գոյությունը: Ներլեզվական նշանակությունը կրկնվում է վերաբերական նշանակության մեջ, իսկ վերջինս էլ կանխորոշում է այն իմաստային վերաբերությունների շրջանակը, որ կարող է ունենալ հնչյունը արտալեզվական իրականության հետ հարաբերակցվելիս:

Հնչյունի արտահայտությունը և բովանդակությունը, լեզվական կառուցվածք շունենալով (լեզվական տարրերից բաղադրված շինելով), բնականաբար իրար հետ կապվում են առանց կառուցակերպային միջնորդավորման: Հնչյունի բովանդակությունն անմիջաբար բխում է նրա արտահայտությունից, ինչպես բնական նշաններում:

Բնական նշանները, ըստ էության, նշաններ չեն, այլ միայն մեկնաբանվում են որպես նշաններ: Բնական նշանն ընդամենը մի իրողության հետ պատճառահետևանքային հարաբերությամբ կապված մի այլ իրողություն է, որին նշանայնություն է վերագրվում: Հնչյուն-նշանի բնականությունը ոչ թե երկու տարբեր իրողությունների, այլ նշանի արտահայտության և բովանդակության բնական կապ է: Իհարկե, անմիջականությունն ու բնականությունն այստեղ բացարձակ չեն: Այդ բնությունը «մարդկային բանականության բնությունն»¹⁹ է. աշխարհի և լեզվի միջև (բովանդակության սերման մեջ), բովանդակության և արտահայտության միջև (լեզվական նշանի սերման մեջ) միշտ կա մարդը, կա նրա բանականությունը, նրա հոգեկան աշխարհը: Բայց եթե մյուս լեզվական նշանների բովանդակությունը ձևավորվում է արտալեզվական հիմունքներով, ապա հնչյունի բովանդակությունն ինքնաբուխ է: Դա լեզվի բանականության սահմաններում հնարավոր առավելագույն բնականությունն է: Հնչյունը բառիս բուն իմաստով բնական նշան չէ. այն ամենաբնականն է լեզվական նշաններից:

Որպես բովանդակության և արտահայտության սերտ ու հարաբերականորեն անմիջական կապով ստեղծված նշաններ՝ հնչյունները, Չ. Փիրսի տերմինաբանությամբ, լեզվական ցուցանշաններ են (ցուցանշանային հարաբերությամբ կազմված նշաններ): Չ. Փիրսը ցուցանշանը, խորհրդանշանը և պատկերանշանը բնորոշում է՝ ելնելով նշանի և նշանակվողի (արտանշանային) հարաբերություններից: Բայց այդ անվանումներով, ինչպես այս դեպքում, կարող են բնութագրվել նաև նշանակիչի և նշանակյալի (ներնշանային) հարաբերությունները:

Հնչյունի ցուցանշանայնությունը յուրահատուկ բնույթ ունի: Ի տարբերություն ուրիշ ցուցանշանների, որոնց նշանայնությունը պարզորոշ հիմունքներ ունի՝ հնչյունը լեզվի ամենախորհրդավոր և ամենադժվար մեկնաբանվող նշանն է: Այնուամենայնիվ, բովանդակության և արտահայտության անմիջական միասնությամբ հնչյունը մնում է պարզության իդեալ լեզվի համար:

Հնչյունը ոչ թե միայն մեկ կազմիչ՝ արտահայտություն, ունեցող ենթանշանային իրողություն («ֆիզոր») է՝ ի տարբերություն նաև բովանդակություն ունեցող նշանների, այլ ընդամենը երկու կազմիչ՝ արտահայտություն և բովանդակություն, ունեցող պարզագույն նշան է՝ ի տարբերություն ավելի բարդ՝ նաև կառուցակերպային կազմավորում ունեցող, նշանների: Բովանդա-

¹⁹ В. фон Гумбольдт. О сравнительном изучении языков применительно к различным эпохам их развития. — Избранные труды по языкознанию. М., 1984, էջ 314.

կությունը հնչյունում բացակայող և ձևույթի մեջ ներդրվող իրողություն չէ: Հնչյունի համեմատությամբ ձևույթի և մյուս լեզվական միավորների յուրահատկությունը ոչ թե բովանդակություն ունենալն է, այլ այն, որ արտահայտությունն ու բովանդակությունը դրանցում բախվում են որպես հակուղղված եզրեր: Հնչյունին այդպիսի բախում հայտնի չէ: Նրա բովանդակությունը, արտահայտությունից բխող, այսինքն՝ ներլեզվական լինելով, գոյություն ունի արտահայտության հետ անտարանջատ, համախառն (սինկրետիկ) միության մեջ: Այդ միությունը տարրորշվում («հոգաբաշխվում») է ձևույթում, ապա նրա տարրերը վերամիավորվում են բառում և ավելի լիարժեք ու ներդաշնակ կերպով՝ նախադասության մեջ: Նաև այս առումով՝ հնչյունից մինչև նախադասությունը լեզվասերման վերելքը դիտելով, կարելի է ասել, որ հընչյունը լեզվի նշանային համակարգի ... յուրօրինակ ակունքն²⁰ է:

Հնչյունները տարբեր առումներով կարող են զուգադրվել ժեստերին: Հնչյունի բովանդակությունն ու վերաբերությունը, ինչպես ժեստինը, հստակորեն սահմանագծված վերաբերական նշանակություն և կայուն արտանշանային վերաբերություն չեն, այլ վերաբերական նշանակության նկատմամբ կանխատրամադրվածություն և վերաբերական կարողություն: Հնչյունը, ինչպես ժեստը, բնական մղումով ծագում է սվյալ հոգեվիճակից և դրա շնորհիվ դառնում այդ հոգեվիճակի ինքնարուխ արտահայտությունը: Այս ամենը հընչյունները հարաբերակից է դարձնում ժեստերին: Հնչյունները հանդես են գալիս որպես հնչյունային ժեստեր²¹:

Հնչյունի և ժեստի իմաստային-գործառական ընդհանրությունը յուրահատուկ բեկում է ստանում՝ կապված լեզվի ծագման հետ: Ընդ որում նախնական լեզվական հաղորդակցման մեջ ժեստին առավել կամ պակաս կարեվորություն ունեցող տարրի դեր հատկացնելը²² հնչյունի և ժեստի սոսկ արտաքին զուգադրում է ըստ հարակցության և չի նշանակում հնչյունի ժեստայնության ընդունում: Որոշ դեպքերում էլ հնչյունը ժեստի հետ կապվում է ժազումնաբանորեն՝ դիտվելով որպես արտասանական օրգանների շարժումներով մարմնական այլ շարժումների փոխարինման, նմանողական խորհրդանշման արդյունք²³: Ավելին, հնչյունի արտաբերման համար արտասանական օրգանների կատարած շարժումներն անգամ բնութագրվում են որպես ինքնաբավ, ինքնուրույն ժեստեր, հնչյունը համարվում է իմաստի ուղղակի արտահայտում լեզվի շարժումներով, որոնք «հայտնում են հնագույն հոգե-

²⁰ է. Ռ. Աբայան, նշվ. աշխ., էջ 70:

²¹ Հնչյունային ժեստը որպես ժեստի հատուկ տեսակ առանձնացնում է Վ. Վուդտը. տե՛ս В. Вундт. Речь. — С. В. Воронин. Фоносемантические идеи в зарубежном языкознании. Л., 1990, էջ 74: «Հնչյունային ժեստ» բնորոշումը կա ծ. Պոլիվանովի մոտ (տե՛ս Е. Д. Подиванов, նշվ. աշխ., էջ 295—305), բայց այնտեղ դա միայն որոշ հնչյունախմբերի բնութաշում է: Իհնչդեռ այդպիսին են լեզվի բոլոր հնչյունները: Պոլիվանովը դիտարկում է բացահայտ, այնհայտ հնչյունային ժեստերը և անտեսում մյուսները:

²² Այդպես են վարվում, օրինակ, Զ. Վիկոն, է. Ռ. դե Կոնդիլյակը, Պ. Լ. Մ. դե Մոպերտյուսին, Ա. Ռ. Տյուրգոն, Ժ. Փ. Ռուսոն, մասամբ Զ. Դարվինը. տե՛ս Дж. Вико. Основания новой науки об общей природе наций. М., К., 1994, էջ 158, 161, 380, Э. Б. де Кондильяк. Опыт о происхождении человеческих знаний.—Сочинения, т. I, М., 1980, 182—188, Б. В. Якушин. Гипотезы о происхождении языка. М., 1984, էջ 49, 59, А. Р. Тюрго. Избранные философские произведения. М., 1937, էջ 26, 148—149, Ж.-Ж. Руссо. Опыт о происхождении языков, а также о мелодии и музыкальном подражании. — Избранные сочинения, т. I, М., 1961, էջ 221—225:

²³ Հնչյունի այդպիսի մեկնաբանումներ տալիս են, օրինակ, աստիկները, Լ. Գայդերը, Ե. Քլայնը, Ռ. Փելչիթը. տե՛ս История лингвистических учений: Древний мир. Л., 1980, էջ 184—185, Б. В. Якушин, նշվ. աշխ., էջ 63—64, III. Балли. Общая лингвистика и вопросы французского языка. М., 1955, էջ 147—148:

կան շարժումների գաղտնիքները»²⁴ և իրենց հերթին կարող են կրկնվել որպես մարմնի էվոլյուցիոն շարժումներ: Սակայն ժեստի այս ըմբռնումները, նույնիսկ վերջինը, դուրս չեն գալիս մարմնի մասերի շարժումների շրջանակից, այլ միայն տաքաժվում են յուրահատուկ դեպքերի վրա, որոնք ընդունված չէ ժեստ կոչել: Հնչյունը ներկայացվում է որպես արտասանական օրգանների արած ժեստի հետևանք և ոչ ինքնին ժեստ: Մինչդեռ հնչյունը (ոչ նրա արտաբերման ժամանակ կատարվող աշխատանքը) ներքուստ ևս ժեստային բնույթ ունի: Հնչյունային ժեստը հնչյունով ուղեկցվող ժեստ չէ, այլ ժեստ է հնչյունով: Այն յուրահատուկ ժեստ է, որում տեսողական պատկերը վերածվում է լսողականի: Հնչյունը, կարելի է ասել, լսելի ժեստ է:

Ոչ հնչյունային ժեստերից հնչյունայինների էական տարբերությունն այն է, որ նրանք ներքին ընդօրինակումով են ստեղծվում, իսկ ոչ հնչյունային հաղորդակցական ժեստերը սովորաբար իրողություն արտաքին հատկանիշի ընդօրինակումն են: Դրա հետևանքով հնչյունային ժեստերն ունեն հետագա որակական փոխակերպման, հավելման՝ ուրիշ լեզվական միավորների կազմում երևութավորման-որոշակիացման հեռանկար:

XVIII--XIX դարերի լեզվափոխութանների համար առանձնահատուկ հրամայք ունեն լեզվական արտահայտության համար հատկապես հնչյունի ընտրվելը պատճառաբանելու հարցը, որի մուտքը XX դար խոշընդոտվեց նեոպոզիտիվիստական գրաքննությանը:

Ի տարբերություն մյուս զգայարաններով կատարվող ընկալման, որը նյութական գրգռների արտացոլում-անդրադարձում է՝ հնչյունի լսողական ընկալումը, եթե կարելի է այդպես ասել, ներցոլում—այստադարձում է: Սա է, որ հնարավորություն է տալիս հնչյունը դարձնել ոչ միայն արտաքին ընկալման, այլև ներքին ըմբռնման գործիք:

Տիեզերքը հագեցած է ալիքաձև տարածվող թրթռումներով (նույնիսկ ասում են՝ բազմազան թրթռումներից է կազմված): Այդ թրթռումների մեջ մտքի տեղը անվերապահորեն ճշտված չէ, բայց արդեն իսկ նրա հեռահաղորդման հնարավորությունն ակնհայտ է դարձնում նրա ճառագայթային բնույթը (այն, որ այդ ճառագայթները որևէ սարք չի որսում, ընդամենը գոյություն ունեցող սարքերի անկատարության վկայությունն է): Մտային թրթռումը հաղորդելու համար բնական է նրա նման թրթռուն հաղորդամիջոցի ընտրությունը: Մտքի էներգիական լիցքը լեզվական էներգեական լարման է հասնում իր թրթռումները հնչյունների մեջ դնելով: Միտքը իրեն համա-միտ հնչյուններ է գտնում և դրանով իսկ ինքը դառնում է նրանց համա-հունչ: Մտքի հնչյունային փոխակերպումը հնարավոր է դառնում հնչյունի գերթափանցիկության շնորհիվ: Զգայականորեն ընկալելի լինելով հանդերձ՝ հընչյունները սեփական, իրենց ներհատուկ նյութից զուրկ ալիքներ են՝ մաքուր ալիքային սկզբունք, որը կարող է ներդրվել ցանկացած նյութի մեջ՝ նրան ալիքավորելով իր ձևով: Իսկ իրենց ձևը այդ ալիքները վերցնում են մտքի թրթռումից. պետք է որ հենց սա լինի հնչյունային թրթռումների գոյացման և հնչյունի իմաստավորման ելակետը (որ առայժմ փորձնականորեն անստուգելի է փորձի հնարավորության բացակայության պատճառով): Օղբ որպես իր տարածման միջավայր օգտագործող հնչյունային ալիքում էականը նրա նյութը չէ, այլ ձևը, որը որոշվում է մտքի ձևով. այդ ձևի շնորհիվ հնչյունն ունակ է դառնում իր մեջ ամփոփել, կրել և, որ պակաս կարևոր չէ, տեղ հասցնել մտքի ուժը՝ մտքի էներգիան: Այսպիսով՝ հնչյունը ձևի գերիշխանության գերագույն մարմնացումն է լեզվում:

²⁴ А. Белый, Глоссолалия. Берлин, 1922, էջ 15—16.

Օրում տարածվող հնչյունները միակ ալիքներն են, որոնք մարդը դիտակցարար կարող է առաջ բերել: Բայց նրանց ամենաէական յուրահատկությունն այն է, որ նրանք ոչ միայն ծավալվում են երկու մարդկանց միջև, այլև ներթափանցում նրանց մեջ՝ ծնունդ առնելով խոսողի բառիս բուն իմաստով ներսում՝ մարմնի սահմաններից ներս, և համապատասխան արձագանքային թրթռում առաջացնելով ընկալողի դարձյալ ներսում՝ թմրկաթաղանթում, վերջինիս միջնորդավորումով էլ՝ է՛լ ավելի խորքում: Հնչյունն իրագործում է կարևորագույն խնդիրը. իր հետ կապված միտքը չի զրկում թրթռումից և ինքն էլ դառնում է այդ թրթռումի կրողը, ավելին, հենց այդ թրթռումն էլ հաղորդում է:

А. С. АБРААМЯН — Звук как языковая единица.— Критический обзор многочисленных теорий фонемы показывает корни их противоречивости: один и тот же термин используется в различных, зачастую несовместимых смыслах. Между тем для обозначения звуковой единицы языка введение специального термина вовсе необязательно. Обычно подчеркивается смыслоразличительная функция «фонемы». Однако звук не просто различает номинативные единицы, но в первую очередь участвует в образовании их выражения и содержания. Следовательно, он не может не иметь собственного содержания. Значение звука не понятийное, а модальное: это общий настрой, очерчивающий круг референциальных возможностей. Специфическое содержание звука опирается не на внеязыковую действительность, а на выражение самого звука, причем связано с ним непосредственно, без структурного опосредования. Звук, обладающий возможной максимальной в языке естественностью, может быть охарактеризован как индексальный знак. Его вибрационный характер наилучшим образом подходит для передачи вибраций мысли.